ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Դպրոցի տնօրեն՝ Ի. Սարգսյան

«31» 08 2023թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ «ԱԿՈՒՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ 5-Բ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասղեկ՝ Սարգսյան Ստելլա

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀՄԻՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **(դասարանի ընդհանուր բնութագիրը)**

5-րդ դասարանում սովորում է 18 աշակերտ՝ 11 տղա և 7 աղջիկ:

2. ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Դասարանի կազմակերպչական աշխատանքեր, կահավորում, մաքրության ապահովում:
- Միջոցառումների և նպատակային էքսկուրսիաների կազմակերպում:
- Սովորողների ճանաչողական, մտավոր, ինտելեկտուալ կարողությունների զանգացմանն ուղղված տարաբնույթ քննարկումների, զրույցների, խաղերի կազմակերպում:
- Ուսուցողական տեսանյութերի, ֆիլմերի դիտում և քննարկում:
- Սովորողների հարմարումը միջին դպրոցին ուղղված խմբային հոգեբանական աշխատանք:
- Հաղորդակցման և համագործակցության կարողությունների զարգացում:
- Զրույց-քննարկումների անցկացում ընկերասիրություն, հայրենասիրություն, ազգային արժեքներ և ավանդույթներ թեմաներով:
- Սովորողների հանրօգուտ աշխատանքների կազմակերպում

3. ՍՈՎՈՐՈՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ծանոթացում սովորողների սոցիալական պայմանների
- Ծանոթացում սովորողների ընտանիքների կազմին, բարոյահոգեբանական պայմաններին:

4. ԱՇԽԱՏԱՆՔ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

- Ծնողական ժողովների կազմակերպում
- Ծնողների հետ անհատական զրույցների անցկացում
- Ծնողավարության հմտությունների, տարիքային առանձնահատկությունների վերաբերյալ հանդիպումների կազմակերպում:

5. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈԹՅՈՒՆ

5.1 - Հոգևոր դաստիարակություն

Կարևորելով երեխայի հոգևոր դաստիարակությունը, սերմանել և ամրապնդել հարգանք ազգային մշակույթի և հոգևոր արժեքների նկատմամբ: Տալ ինֆորմացիա եկեղեցական տոների մասին, ծանոթացնել դրանց ավանդույթների, ծիսակարգի և նշանակության մասին:

5.2 - Ֆիզիկական դաստիարակություն

Հիմնական խմբում ընդգրկված աշակերտների հետևել, որ դասերին ներկայանան համազգեստով: Խրախուսել որպեսզի մասնակցեն դպրոցում կազմակերպվող սպորտային միջոցառումների: Անցկացնել զրույցներ հիգիենայի և առողջ ապրելակերպի և վնասակար սովորությունների մասին:

5.3 - Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Կազմակերպել քննարկումներ, որոնք սովորողների մոտ կձևավորի հարգալից և պատասխանատու վերաբերմունք պետության, պետական խորհրդանիշների նկատմամբ, կնպաստի հայրենասիրական ոգու բարձրացմանը:

5.4 - Աշխատանքային դաստիարակություն

Հետևել և խրախուսել, որ դասարանի յուրաքանչյուր աշակերտ իր կարողությունների սահմաններում մասնակցի հանրօգուտ աշխատանքներին, դպրոցում և համայնքում կազմակերպվող շաբաթօրյակներին:

5.5 - Բնապահպանական դաստիարակություն

Ձևավորել և զարգացնել պատասխանատու և հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ: Կազմակերպել էկոլոգիական խնդիրների վերաբերյալ քննարկումներ, իրազեկումներ:

5.6 - Գեղագիտական դաստիարակություն

Գեղագիտական ճաշակը զարգացնելու, գեղեցիկը ընկալելու, գնահատելու և արժևորելու կարողությունը զարգացնելու համար ծանոթացնել ազգային, համաշխարհայի մշակույթին, կազմակերպել այցելություններ թանգարաններ, պատկերասրահներ, թատրոններ:

ԴՊՐՈՑ - ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Կազմակերպել անհատական հանդիպումներ ծնողների հետ: Դասարանում և դպրոցում առաջացած դժվարությունները հաղթահարելու համար համագործակցել ծնողների հետ:

2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Խթանել և ապահովել դասարանի աշակերտների մասնակցությունը.

- գեղարվեստական, երաժշտական, սպորտային, նախասիրական խմբակներին
- առարկայական օլիմպիադաներին
- համադպրոցական, տարածքային և մարզային միջոցառումներին

Դասարանի ղեկավարի աշխատանքներ.

- Կատարել դիտարկումների բնական միջավայրում,
- դասղեկի դասալսումներ

- Իրականացնել աշխատանքներ դժվար դաստիարակվող, վարքային առանձնահատկություններ ունեցող, սոցիալապես անբարենպաստ վիճակում գտնվող, ծնողազուրկ աշակերտների հետ,
- անհատական աշխատանքներ աշակերտների հետ
- դասարանական ծնողական ժողովների կազմակերպում,
- անհատական աշխատանքներ ծնողների հետ
- աշխատանքներ ծնողական խորհրդի հետ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
1-ին շաբաթ	Գիտելիքի օր: Ծանոթացում դասարանի հետ:	01.09.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
2-րդ շաբաթ	Դասարանական ներքին կարգապահական կանոնների մշակում:	08.09.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
3-րդ շաբաթ	Խաչվերաց տոն	15.09.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
4-րդ շաբաթ	ՀՀ Անկախության օր: Հայաստանի զինանշանի և դրոշի պատմությունը: Օրհներիգի ստեղծման պատմությունը:	22.09.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
5-րդ շաբաթ	«Մենք 5-րդ դասարանցիներ են» 5-րդ դասարան, ի՞նչն է նոր»	29.09.2023թ	Դասղեկ, աշակերտներ
6-րդ շաբաթ	Ուսուցիչ բարի, վեհ ու թանկագին… (ասմունքի ժամ)	06.10.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
7-րդ շաբաթ	Թարգմանչաց տոն . անդրադարձ տոնի պատմութանը: Մ. Մաշտոցը և հայ գրերի գյուտը: Լեզուների իմացության նշանակությունը	13.10.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
8-րդ շաբաթ	«Դպրոցական կյանքի կանոները» «Իրավունքներ և պարտականություններ»	20.10.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
9-րդ շաբաթ	«Մեր դասարանը»	03.11.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
10-րդ շաբաթ	«Մեր ուսուցիչները»	10.11.2023թ	Դասղեկ, աշակերտներ

11-րդ շաբաթ	«Դպրոցական առարկաներ»	17.11.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
12-րդ շաբաթ	«Հոգեբանական դեղատուն»	24.11.2023թ	Դասղեկ, աշակերտներ
13-րդ շաբաթ	«Ի՞նչ է դպրոցական բուլլինգը» տեսանյութերի դիտում և քննարկում: https://www.youtube.com/watch?v=YyDJafzuUK4 https://www.youtube.com/watch?v=EeJsPF-aL9E https://www.youtube.com/watch?v=zhVjD9GFrWo	01.12.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
14-րդ շաբաթ	«Բնական աղետներ»: «Ի՞նչ պետք է անել երկրաշարժի ժամանակ»	08.12.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
15-րդ շաբաթ	Պահպանել բնությունը, նշանակում է պաշտպանել հայրենիքը	15.12.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
16-րդ շաբաթ	Դասասենյակի ձևավորում: Ինչպե՞ս են Ամանորը նշում աշխարհում:	22.12.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
17-րդ շաբաթ	Քաղաքավարություն և բարեկրթություն: Վարվեցողության կանոններ:	12.01.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
18-րդ շաբաթ	Հանդուրժողականություն և բարություն	19.01.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
19-րդ շաբաթ	Հայոց բանակի տոնը:	26.01.2024թ	Դասղեկ, աշակերտներ
20-րդ շաբաթ	Ջրույց-քննարկում «Ընկերություն, ընկերասիրություն»: Խաղ «Ընկերության տուփ»:	02.02.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
21-րդ շաբաթ	Ինչպես հաղթահարել դժվարությունները	09.02.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
22-րդ շաբաթ	Տեառնընդառաջ. Տոնի խորհուրդը	16.02.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
23-րդ շաբաթ	Ի՞նչ են սովորեցնում մեզ Հովհաննես Թումանյանի հերոսները: Մուլտֆիլմերի դիտում, քննարկում:	23.02.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
24-րդ շաբաթ	Գիրքը իմ բարեկամը է: Թերապևտիկ հեքիաթների ընթերցում և վերլուծություն:	01.03.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
25-րդ շաբաթ	Կանանց միջազգային օր Մարտի 8: Տեղեկություն տոնի պատմության մասին:	08.03.2023թ.	Դասղեկ, աշակերտներ
26-րդ շաբաթ	Համակարգիչն ընկեր է, թե թշնամի: Ինչպե՞ս պայքարել կախվածության դեմ:	15.03.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
27-րդ շաբաթ	Եկեք ճանաչենք մեր հույզերը	22.03.2024թ.	Դասղեկ, աշակերտներ

28-րդ շաբաթ	Հուզական ինտելեկտի զարգացմանն ուղղված հոգեբանական խաղեր:	05.04.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
29-րդ շաբաթ	Մայրության և գեղեցկության տոն: Բացիկների պատրաստում:	12.04.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
30-րդ շաբաթ	Հույզերի կառավարման կարողության զարգացում:	19.04.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
31-րդ շաբաթ	Սպորտը՝ առողջ ապրելու գրավական: Իմ մարզաձևը: Հայ հայտնի մարզիկներ:	26.04.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
32-րդ շաբաթ	«Աշխատանքն է մայրաղբյուրը բոլոր բարիքների» քննարկում: «Արհեստների քաղաք»	03.05.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
33-րդ շաբաթ	Մայիսը հաղթանակի ամիս: Ինչ է հայրենասիրությունը:	10.05.2024թ.	Դասղեկ, աշակերտներ
34-րդ շաբաթ	Երկրորդ կիսամյակի և տարեկան արդյունքների ամփոփում:	17.05.2024թ.	Դասղեկ, աշակերտներ